

ԽՕՍՔԻ ԵՒ ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Կամայ-ակամայ մի հարց է ծագում. ինչ նպատակով կառավարութիւնը ճնշում է գործ դնում խօսքի և մամուլի վերայ. ինչու համար ամուր շղթաներով կաշկանդում է խօսքն ու գիրը. արդեօք ժողովրդի՝ բնակչութեան շահն ի նկատի ունենալով, թէ մի այլ բան Հարցը պարզ է, պարզ էլ պատասխան է պահանջում. կառավարութիւնն այդ ճնշումը գործ է դնում՝ ի նկատի ունենալով միմիայն և միմիայն իւր շահը. ցանկանալով ազատ մնալ և ազատ պահել իւր ստորագրեալների՝ գործադիր իշխանութիւնների գործունելութիւնը հասարակութեան քըննադատութիւնից. թէ ո՞րքան աննպատակ և սխալ է այս ուղղութիւնը, յետոյ կը տեսնենք. առ այժմ աշխատենք ուրուագծել, թէ ո՞րքան է տուժում ժողովուրդն այն երկրներում, ուր խօսքի և մամուլի ազատութիւն գոյութիւն չունի:

Յայտնի է, որ սահմանադրական պետութիւններում և հասարակապետութիւններում — տռհասարակ ազատ երկրներում՝ կառավարութիւնը գտնուում է ժողովրդի (պարլամենտ, կօնդրէս, րէյխստագ, սէյմ և այլն) հսկողութեան տակ. մանաւանդ պարլամենտական երկրներում, ուր նախարարներն էլ պատասխանատու են պարլամենտի առաջ. Այդ երկրներում կայ գատաստանական իշխանութիւն բառի բուն նշանակութեամբ, որ միանգամայն անկախ և օրէնողրական և գործադիր իշխանութիւններից. Այդտեղ անհատը, լինի պաշտօնական անձն, թէ ոչ, ազատ է անիրաւացի ճնշումներից. Այդտեղ իշխանութիւն ունեցող անձինք անկարող են նեղել և զրկել որ և է անհատի, որովհետեւ օրէնքի համաձայն ամեն մի հասարակ մարդ իրաւունք ունի բողոքելու գատարանին իշխանաւորի-աստիճանաւորի դէմ. իսկ գատարանը՝ շնորհիւ իւր անկախութեան, միջոց ունի, անոչառ կերպով քննելու և

վճռելու դատը։ (Այս խնդրի նկատմամբ աւելի աչքի է ընկնում անգլիական արձանագրութիւնը, որով նախարարի պատասխանատուութիւնն անգամ ոչնչով չի տարբերում հասարակ բանուորի պատասխանատուութիւնից։ կան պետութիւններ, ուր աստիճանաւորներին դատելու համար առանձին դատարան է ստեղծում։ ինչպես օր, ֆրանսիայում աստիճանաւորներին որ և է յանցանքի համար դատում է ոչ թէ ընդհանուր—քաղաքացիների համար գոյութիւն ունեցող դատարանն, այլ յատուկ այդքանի համար ծառայութեան մէջ եղող աստիճանաւորներից կազմուած դատարանը)։ Ազատ երկրներում իւրաքանչիւր իշխանաւորի սխալ քայլը, կամայական—ազօրինի գործունէութիւնը ժողովների, մամուլի նիւթ է դառնում, որով հասարակութիւնը միջոց է ունենում ճանաչելու՝ և դատարանը կարելիութիւն ստանում աւելի մանրամասն և ուղիղ ըմբռնելու խնդիրը։

Սակայն այլ պատկեր ենք տեսնում այնտեղ, ուր գրաքննութեան և զանազան արգելքների պատճառով արդարութիւն երեան հանող մամուլն ստիպուած է լինում լոելեայն անցնել ամեն մի կեղծիքի, բռնութեան, անարդարութեան վրայով և ուր կեղեքուած ու զրկուած ժողովրդի ձայնը տեղ էլ չի հասնում և մնում է «ձայն բարբառոյ յանապատի»։ Այստեղ արդէն աստիճանաւորն ու իշխանաւորն ազատ են իրենց գործերի և արարքների մէջ և շատ անգամ այդ ազատութիւնը հասցնում են սանձարձակութեան, Այստեղ ընդարձակ ասպարէղ է բացւում պաշտօնական անձանց ազօրինութիւնների ու կամայականութիւնների համար, ձիշտ է, այստեղ ևս դուք իրաւունք ունիք բողոքելու ցած կամ երբեմն նաև բարձր իշխանաւորի ապօռինի ընթացքի դէմ, սակայն ձեր այդ իրաւունքն անունով միայն գոյութիւն ունի. ձեր բողոքը կամ տեղ չի հասնի, կամ եթէ հասնի էլ, արխիւի փոշիների կերակուր կը դառնայ և այնուհետեւ վայ քեզ բողոքող։ Օրինակներ շատ, որքան ուզում էք. սակայն ինչ կարիք կայ հեռուն գնալու և օրինակներ փնտուելու, քանի

որ Բագուի, Նախիջևանի ոստիկանական կազմերն ու Գանձակի գեներալ նահանգապալետն իրեն արբանեակներով դեռ, կարելի է ասել, գործում են այն ինչ, եթէ հաւաքենք այն բոլոր բանաւոր ու գրաւոր բողոքները, որ տուել է ժողովուրդը դրանց գէմ՝ հատորներ կը կազմուին Այսպէս իշխանութիւններն ազատ մնալով իրենց գործունէութեան մէջ և ոչ հասարակական կարծիքից ճնշուելով, ոչ էլ դատարանական իշխանութիւնից վախենալով՝ ի չարք գործ կը դնեն իրենց ուժն ու իրաւունքները և տուժողը կը տուժի. կը տուժեն առանձնապէս և զգալի կերպով ժողովրդի ստորին խաւերը, որոնք ոչ փող ունին նրանց աշքը քաղցրացնելու, ոչ էլ միջոց նրանց գէմն առնելու, Պարզ է, որ այսպիսի հանգամանքում առաջ կը դայ կաշառակերութիւն, ի զուր խուզարկութիւններ, ապօրինի բանտարկութիւններ և այլն և այլն և մամուլը՝ բերանը փակ, սիրտը խոցւած, աղի արցունք կուլ տալով ստիպուած կը լինի լուել, որ նոյն է, թէ հասարակութեան կարծիքը մեռելութեան կը դատապարտուի. Սակայն ինչո՞ւ զարմանանք այս իրողութեան վրայ, երբ յիսուն տարի առաջ Ռուսաստանում արգելուած էր նոյն իսկ կայսերական թատրոնի գերասանների մասին աննպաստ խօսել, կամ գրել: Դերասանները պետական ծառայութեան մէջ էին համարւում, ուստի և գրաքննութիւնը իւր պաշտապանութեան տակ էր վերցրել նրանց, ինչպէս որ ամեն մի աստիճանաւորի: Պարզ է, որ այս հանգամանքը շատ նշանաւոր էր անտաղանդ գերասանների համար. նրանք ապահովուած էին քննադատութիւնից—բացասական գնահատութիւնից: Բայց դրա հետ միասին ոչ ոք չէր հաւատում այդ գերասանների հասցէին շռայլուած գովասանքներին, որովհետեւ բոլորն էլ գիտէին, որ քննադատութիւնն ազատ չէր, ուրեմն և անվստահելի: Թատրոնական գործի առաջադիմութեանը մնասակար էր, ի հարկէ, գերասանների քննադատութիւնից այդ կերպ պաշտպանուած լինելը: Նոյնը կարելի է ասել նաև պետական—հասարակական կեանքի միւս բոլոր ճիւղերի վերաբերմամբ՝ ու

սուցիչը, դատաւորն, տատիճանաւորը, հասարակական դորածիչն, առհասարակ, այնտեղ է աւելի ուշագիր և հարակադրութիրեն հսկելու, որ գտնուում է հասարակութեան արթուն հսկողութեան տակը Սակայն ուր չկայ մամուլի ու խօսքի ազատութիւն, այնտեղ չի կարող լինել նաև հասարակական աշալուրջ հսկողութիւն. իսկ որտեղ բացակայում է այդ հսկողութիւնը, շատ հասկանալի է, որ այնտեղ պարարտ հոգ կը գտնեն իշխանութեան—մահաւանդ ստորին պաշտօնեաների կամայականութիւններն ու սահմարձակ անիրաւութիւնները: Եթէ այս բոլորի վերայ աւելացնենք նաև այն հանդամանքը, որ նման տեղերում ու պայմաններում հասարակութիւնը կը քարանայ մտաւորապէս, անտարբերութիւնը բուն կը դնի նրա հօգում և պատճառ կը դառնայ գիտակցութեան թմրելուն, հասկանալի կը լինի, թէ որքան մեծ զրկանք ու վնաս է ժողովրդի համար խօսքի և մամուլի անազատ կեանքը և որքան մեծ բարիք խօսքի և մամուլի ազատութիւնը: (Սեր խօսքն, ի հարկէ, վերաբերում է առհասարակ մամուլին և ոչ թէ առանձին—մասնաւոր լրագրների, որոնց մէջ կարող են պատահել և այնպիսի՝ մամուլի կոչման ու պատուին անվայել լրագիրներ, որոց ոչնչանալը ոչ միայն մամուլին ոչ մի վնաս չի հասցնի, այլ ընդհակառակը, մեծ օգուտ կը պատճառէ մամուլին և մեծ ուրախութիւն գիտակից հասարակութեան):

Սակայն գուցէ առարկողներ լինեն, թէ խօսքի ու մամուլի ազատութիւնը մարդիկ կարող են ի շարք դորձնել, չէ՞ որ դրանք սարսափելի զէնքեր են. չէ՞ որ ես կարող եմ մէկին գող հրատարակել և իմ լեզուից թոցրած խօսքը կարող է փչացնել նրա ամբողջ ապագան: Չէ՞ որ ես կարող եմ մարդասպան հրատարակել և գուցէ իմ շարամտութեամբ—հակառակորդիս արատաւորելու համար ասած խօսքո բուռական լինի, որ նրան բռնեն և երկարժամանակ բանտում նստեցնեն: Յետոյ նա կարդարանայ, ի հարկէ, բայց այդ հանդամանքը չի ջնջի նրա կեանքից այն ամիսները, որ նա անցրել է բանտում: Արդեւը ես

անպատիժ պիտի մնամ այս դէպքում խօսքի ազատութեան հիման վերայ:

Այս դեռ քիչ է, ես կարող եմ մէկին համոզել, որ գնայ դողութիւն անելու, ես կարող եմ բացատրել—ցոյց տալ նրան դողութեան ճանապարհը, յարմար եղանակը, ամենալու ժամանակը, կարող եմ ցոյց տալ նրան այն տեղը, ուր նա կարող է պարտկել իւր դողացածը: Գուղութիւնը կը կատարուի շնորհիւ իմ, իսկ ես բոլորովին մի կողմ կը մնամ: Ես չփողացայ, ես միայն դորձեցի խօսքով: Միթէ խօսքի ազատութեան հիման վերայ անպատիժ պիտի մնայ այդ ձեռվ խօսքից օգտուելը: Ուրիշ խօսքով—միթէ խօսքի ազատութիւնն իրաւունք է տալիս ամեն տեսակ յանցանք դորձել խօսքի միջոցով: Ի հարկէ, ոչ խօսքի ազատութեան տակ չպէտք է հասկանալ անսահման և անպայման ազատութիւն խօսելու ամեն ինչ անպատիժ կերպով, այլ ազատութիւն նախնական թուլաւութիւնից, ազատութիւն՝ տաել, գրել և տպագրել գրաքննութեան, կամ որ և է մշտական իշխանութեան հսկողութիւնից դուրս: Բայց եթէ բանաւոր կամ գրաւոր խօսքը գառնում է յանցանքի գործիք, ինչպէս մէկին դուզութեան համոզելու դէպքում է, մտնում է յանցանքի շրջանի մէջ: Գողութիւնը գատապարտելու դէպքում պէտք է դատուի ոչ միայն գողն, այլ և նրան համոզողը—դըր գողը: Դատարանը, եթէ գտնի համոզողին կարող է յայտնել, որ նրա խօսքը վճռական դեր է խաղացել գողութեան խնդրում: Գողութիւնը կարող էր տեղի չունենալ, եթէ չինէր մասնակցողը—համոզողը: Դատարանը կը դատապարտի վերջնիս ոչ թէ խօսքի համար, ոչ այն պատճառով, որ նա առանց թուլաւութեան խօսել է, այլ որ պէս գողութեան մասնակցողի, հետեւապէս կը դատի նրան ոչ իրրե հոետօրի, հեղինակի, այլ որպէս գողի: Այդպէս է բոլոր երկրներում և այն երկրներում, ուր ընդունուած է խօսքի ազատութիւն և այս վերջնս այդպիսի դատարանական մեղադրանք կարդալուն երբէք էլ չի խանգարում:

Սակայն մարդ կարող է դատուել նաև խօսքի համար—որպէս հռետոր կամ հեղինակ։ Վիրաւորանքը, բամբասանքը, ամբաստանութիւնները յանցանք են համարւում, թէ և սկսում են խօսքով և վերջանում դարձեալ խօսքով։ Այստեղ խնդիրը գողութեան և սպանութեան չի վերաբերում, ուր խօսքով սկսուածը գործով է վերջանում և ուր խօսքը յանցանքի միայն մի մասն է կազմում։ Այստեղ խօսքը (բանաւոր, դրաւոր, թէ տպագրական—այդ միևնոյն է) ինքը հենց յանցանք է՝ իրուն բամբասանք կամ զրաբարտութիւն։ Իւրաքանչիւր մարդ իրաւունք ունի պահանջելու, որ իւր անձնական պատիւը պաշտպանուած լինի վիրաւորանքներից՝ մանաւանդ բամբասանքից։ Դրա համար իւրաքանչիւր անհատ իրաւունք պէտք է ունենայ դիմել դատարանին բողոքելու բամբասողի վերայ—տպագրուած լինի այդ բամբասանքը, թէ բերանացի արտասանուած։

Նոյն բողոքը կարելի է տալ նաև խօսքի ազատութեան դէպքում, ի հարկէ, միմիայն այն ժամանակ, երբ բամբասանքը կամ զրաբարտութիւնն արդէն արուած է։ Սակայն չի կարելի արդելել մարդկանց խօսքը դրել կամ տպագրել և կամ պահանջել, որ նրանց իւրաքանչիւր խօսքը նախ լսեն, նայեն և ապա թոյլ տան միայն այն պատճառով, որ գուցէ մէկը՝ կարող է ի շարք գործ դնել իւր ազատ խօսելու իրաւունքը և արտատառել ուրիշի պատիւը։ Կացինը, դանակը, նոյն իսկ փայտը կարող են ծառայել որպէս սպանութեան գործիք։ Այդ առարկաները կը խեն ինձնից և կը դատապարտեն ինձ, եթէ ես դրանցով սպանութիւն գործեմ։ Սակայն միթէ կարելի է արդելել կացնի, դանակի և կամ փայտի գործածութիւնը լոկ այն պատճառով, որ դրանք կարող են սպանութեան գործիք դառնալ, կամ յանցանք գործելու պատճառ հանդիսանալ։ Այդպէս էլ չի կարելի արդելել մտածելը, խօսելը, դրելը և տպագրելը միմիայն այն պատճառով, որ միտքը, խօսքը կամ մամուլը կարող են յանցանքի գործիք—պատճառ ներկայանալ։ Չի կարելի պահանջել, որ

իւրաքանչիւր մարդ՝ հէնց որ պատրաստում է բերանը բանալ խօսելու, հազորդէ նախօրօք յատուկ այդ պաշտօնի համար նշանակուած անձին այն, ինչ որ ցանկանում է ասել և թոյլտութիւն ստանայ նրանից այս կամ այն բանաձեի համար։ Զի կարելի պահանջել նոյնը նաև այն մարդուց, որ պատրաստում է տպագրութեան յանձնելու իւր գրուածքը։ Այսպէս են նայում խնդրի վրայ միայն այնտեղ, ուր խօսքի և մամուլի ազատութիւն կայ և այսպէս են նայում այն բոլոր մարդիկ, որոնք ցանկանում են, որ խօսքի ու մամուլի ազատութիւնն ամեն տեղ տարածուի։

Սակայն որքան նպատակայարմար և օգտաւէտ է հէնց իրեն կառավարութեան համար խօսքի և մամուլի անազատ կեանքը։ Արդեօք դրանով նա կարողանում է ժողովրդի մէջ տարածուող հակապետական դադավարների ու սկզբունքների և առհասարակ, բատ իւր, վնասակար վարդապետութիւնների առաջն առնել։

Որքան էլ խոչընդուներ յարուցանէք ազատ խօսքի դէմ, և որքան էլ զանազան «թոյլտութիւններով» աշխատէք կապկապել նրան, չէք կարող վերջ ի վերջոյ նրա առաջն առնել, ասում են խօսքի ազատութեան կողմանակիցները։ Կարելի է արգելել որ և է գրքի լոյս տեսնելը, բայց թոյլտուած գրքերի կողքին կը յայտնուի արգելուած գիրքը, որը կը կատարի նոյն գործը, եթէ արգելուած չինէր, միայն աւելի մեծ թափով։ Թոյլ տուած գրքի հետ կարելի է վիճել ուրիշ գրքի միջոցով, ընթերցողը կարդալով առաջնը, կը կարդայ և երկրորդը-առաջնի հերքումը։ Իսկ արգելուած գրքի հետ վիճելը շատ գժուար է, նա սովորաբար աւելի ուժեղ է ներգործում ընթերցողի վերայ։ Կարելի է արգելել որ և է հրապարակային դասախոսութիւն, բայց նոյն այդ խօսքը կ'արտասանուի աւելի սակաւամարդ մասնաւոր ժողովներում և շրջաններում, ուր բաւարար քննադատութեան չհանդիպելով՝ աւելի պարաբար հողի մէջ կընկնի։ Միայն այն ժամանակ և այնտեղ մարդկային հասարակութիւնը կը զարգանայ առաջ կ'եր-

թայ ուղիղ ճանապարհով, երբ իւրաքանչիւր անհատ ազատ կերպով կարող կը լինի արտայայտել իւր միտքը՝ ուղիղ թէ սխալ՝ այդ միենոյն է և երբ իւրաքանչիւր մարդ ազատ կը կարողանոյ ընդդիմախօսել։ Այդ ժամանակ միշայն իւրաքանչիւր ունկնդիր միջոց կունենայ լսելու հաւասարապէս երկու կողմն էլ և վերահասու լինելու ճշմարտութեան։ Որքան էլ սխալ լինի արտայայտուած միտքը, այնուամենայնիւ չի կարող վնասակար լինել, երբ արտայայտում է յայտնի և ազատ։ Եւ ընդհակառակը միտքը, ի հարկէ սխալ միտքը կարող է շատ վնասակար և վտանգաւոր լինել, երբ ստիպուած է ծածուկ մնալ և գաղտնի ներգործել։ Այդ ձեռվ արտայայտուած միտքը՝ չհանդիպելով բաւարար քննադատութեան, հետեապէս ազատ մնալով ստուգելուց, աւելի ուժեղ ներգործութիւն և աւելի մեծ տպաւորութիւն է թողնում ընթերցողների կամ ունկնդիրների վերայ։ Բայց միթէ ամեն աշդելուած միտք սխալ է։ Կար ժամանակ, երբ երկրի արեգակի շուրջը պտտուելու միտքը սխալ և վնասակար էր համարւում և արդելում էր, Մեծ գիտնական Դալիլէյը քիչ էր մնում, որ կրակի դատապարտուէր իւր այն համոզմունքի համար, թէ երկիրը շարժւում է, և միմիայն հրաժարուելով այդ համոզմունքից՝ կարողացաւ ազատել իւր կեանքը։ Արդեօք նշանակում է, որ այդ միտքը սխալ էր, չէ՞ որ այդ մասին այժմ կասկածող անդամ չկայ։ Երբեմն կուապաշտ հռոմում քրիստոնէութիւնը խստիւ հալածւում էր, այդ բանը սակայն շխանգարեց քրիստոնէութեան տարածուելուն և նրա տիրապետող կրօն դառնալուն։ Բայց քրիստոնէութեան հալածանքը դժգունացրեց քրիստոնէութեան տարած յաղթանակը, շատ արիւն թափուեցաւ դէպի քրիստոնէութեան տարած յաղթանակը, շատ արիւն թափուեցաւ դէպի քրիստոնէութեան տարած յաղթանակը, և թափուեց՝ ոչ մի օգուտ չտալով հռովմէական հասարակութեան դարձացման։ Քրիստոնեաները անկարող էին ազատ վիճել հեթանոսների հետ և հենց այդ պատճառով էլ ինչպէս հեթանոսական, նոյնպէս էլ քրիստոնէական միտքը զարգացան միմեանցից անկախ և յեղա-

Հրուած—աղաւաղուած։ Հալածանքի աղդեցութեան տակ առաջին դարերի աղաւ քրիստոնէութիւնը այլածնուեց—դաշտաւ կաթոլիկ Եկեղեցի։ Հալածանքի աղդեցութեան տակ քրիստոնէութիւնը ինքը չարացաւ մինչ այն աստիճան որ նրա հետևողները այրեցին հեթանոսական տաճարներ, ոչնչացրին գեղեցիկ յունական արձաններ, փոխանակ հոգացողութեամբ պահպանելու հեթանոսական կուլտուրայի (քաղոքակրթութեան) այդ գեղեցիկ արտադրութիւնները։ Աւելի՝ ուշ արդէն կաթոլիկ Եկեղեցին իր կողմից հալածում էր այն բոլորին, որոնք համարձակւում էին հակառակել և չընդունել նրա գողմաները։ այդ հալածանքն էլ երկար դարեր կաշկանդեց մարդկութեան առաջնորդութիւնը։

Պարզ է, որեմն, որ հալածանքը, անաղաւ կեանքը, մանաւանդ խօսքի ու մամուլի անաղաւ կեանքը ոչ միայն օգտաւէտ և նպատակայաբարմար չէ կառավարութեան համար, այլ և մեծամեծ չարիքների ազբիւր։ Վերջապէս աչքաթող չպէտք է անել ժամանակի ողին, ժողովրդի գիտակցութեան—մտաւորի և բարոյականի մակերեսոյթը։ Իրեսի այն գրութիւնը, որ տանելի էր որ և է ժողովրդի համար մի քանի տարի առաջ, անտանելի է դառնում այդ և էլ աւելի կարճ, նոյն իսկ աննշան ժամանակից յետոյց կար ժամանակ, երբ ոչ թէ խօսքն ու մամուլը, այլ միտքը նոյն իսկ աղաւ չէր։ Սյապէս օվինակ յոյն յայտնի իմաստասէր Սոկրատէօի մահուան պատժի դատապարտուելու ծանրակիու պատճառներից մէկն էլ այն էր, որ նա չէր հաւատում այն աստուածներին, որոց ընդունում և պաշտում էին նրա հայրենակիցները։ Սյապիսով Սոկրատէօի հենց միտքը պատճառ եղաւ նրա դատապարտուելուն։ Աւելի՝ ուշ—միջին դարերում մարդկանց դատում և մահու էին դատապարտում միմիայն այն պատճառով, որ նրանք չէին ընդունում կաթոլիկութեան հաւատի դոգմաները, թէև նոյն իսկ այդ անհաւատութիւնը չէին էլ արտայայտում։ Սակայն տանջանքների միջոցով կորզած խօստովանութիւնն էլ հերիք էր մարդուն

կրակի դատապարտելու համար։ Անցան այդ ժամակները, փոխուեցան տիրող հայեացքներն ու սկզբունքները և անողոք էվոլյուցիան վերջ տուեց այդ խայտառակ երեսյթին։ Ներկայումս միտքն անպայման ազատ է համարւում եւ չկայ մի տեղ, ուր մտքի պատճառով դատեն կամ պատժեն, ի հարկէ, քանի գեռ այդ միտքը չի արտայայւուել բերանացի կամ գրաւոր կերպով։


Սակայն կայ մտքի ազատութեան մօտիկ մի ուր՝ գաղափար ևս, դա խղճի ազատութեան գաղափարն է, որով իւրաքանչիւր անհատ ազատ իրաւունք ունի դաւանելու, ինչ կրօնական համօզում — վարդապետութիւն որ ուզում է ուղիղ է, համարում, Խղճի ազատութիւնն իսկապէս — բառի բուն իմաստով մի մասն է մտքի ազատութեան, որն, ինչպէս ասացինք ներկայումս ամեն տեղ էլ ընդունում է։ Չի կարելի, ի հարկէ, արդելել այն հաւատը կամ անհաւատութիւնը, որը չի արտայայտում։ Բայց չէ որ իւրաքանչիւր հաւատ անհրաժեշտաբար պահանջում է որոշ արտաքին արտայայտութիւն։ մարդ յաճախում է այս կամ այն եկեղեցի և կամ ոչ մի եկեղեցի։ մարդ մկրտում է իր երեխաներին այս կամ այն սովորութեան համաձայն, կամ իսկի չի էլ մկրտում։ Հետեապէս խղճի ազատութիւն կայ միայն այնտեղ, ուր մարդ ազատ է, իրաւունք ունի ոչ միայն իւր հոգու խորքում հաւատալու ինչ որ ընդունում է, այլ բաց-պարզ կերպով արտայալութելու իւր հաւատը՝ այս կամ այն եկեղեցուն յարելով և կամ ոչ մի եկեղեցի չընդունելով։ Այստեղ, ուր կայ մամուլի և խօսքի կատարեալ ազատութիւն, ինչպէս օր. Թրանսիայում կամ Գերմանիայում, գոյութիւն ունի նաև խղճի ազատութիւն։ Թրանսիայում կամ Գերմանիայում պարտադիր չէ եկեղեցում պսակուելը, և մերի (քաղաքագլուխ կամ շրջանի տանուտէր) մօտ — ներկայութեամբ կատարած պսակը կատարեալ օրինական է համարւում։ Պարտադիր չէ նմանապէս երեխաների մկրտիլը, ինչպէս նաև ստիպողական չէ կրօն սովորելը։ Սակայն պէտք է նկատել, որ Գերմանիայում գեռ ևս երեւ-

առևմ են կառավարութեան դէպի խղճի ազատութիւնն ունեցած նախկին բացասական վերաբերմունքի մնացորդ՝ ները, Ամեն մարդ էլ ազատ է հաւատալու, ինչպէս հարկաւոր է համարում, կամ չհաւատալու և արտայայտելու ազատ կերպով իր հաւատը կամ անհաւատութիւնը: Բայց ոչ ոք համարեա նոյն Գերմանիայում չի կարող գիտական ծառայութեան մէջ ընդունուել, եթէ դուրս է եկել եկեցու կազմից: Եթէ որ և է սպայ հրաժարում է եկեղեցուց, ընկերներն ստիպում են, որ դուրս գայ զօրքի միջից— հրաժարուի պաշտօնից: Դրանք, ի հարկէ, ճնշումներ են, որ դործ են դրում խղճի վերայ, սակայն ոչ օրէնքի, այլ սովորութեան թելադրած հնչումներ:

Կաթոլիկ եկեղեցին մինչև այժմս էլ գեռ յամառութեամբ հակառակում է խղճի ազատութեան տարածուելուն. բայց այնուամենայնիւ վերջին տարիներումս հենց կաթոլիկ երկրներում էլ խղճի ազատութիւնը մեծ յաղթանակներ տարաւ, ինչպէս նաև խօսքի ու մամուլի ազատութիւնը: Ներկայումս շատ քշերը կը դանուեն արևմտեան եւրոպայում, որ վիճելի համարեն այն պարզ ինդիքը, թէ ստիպմամբ կամ իշխանութեան հրամանով ժողովրդին եկեղեցի քշելով՝ չի կարելի նրա մէջ կրօնական ոգի մտցնել—զարգացնել: Նոյն բանը դժուարանում եմ ասել Ռուսաստանի վերաբերմամբ, քանի որ գեռ ևս իրենց հայրենի օջախի շեմքը չեն հասել այն հարիւրաւոր անմեղ մարդիկ, որոնք իրենց կրօնական համոզումների պատճառով ստիպուած են եղել տարագիր կեանքի դառնութեան բաժակը քամել՝ հեռու իրենց սիրելի ծննդավայրից— հայրենիքից, հեռու իրենց ընտանիքից—սիրող սրտերից. քանի որ գեռ ևս թարմ է կրօնական համոզումների պատճառով թափուած արիւնը: Բայց արդեօք նման հաւածանքներով երբ և իցէ պետութիւնը կարողացել է հասնել իւր նպատակներին. երբէք. թող վկայ լինի քրիստոնէութիւնը, որ անօրինակ հալածանքների տակ ոչ միշայն պահպանեց իւր գոյութիւնն, այլ և քաղաքակիրթաշխարհի տիրող կրօնը գարձաւ: Բոնի կերպով անկարելի

է մարդկանց մէջ կրօնական համոզումն մտցնել. և եթէ յաջողուի էլ մարդկանց բռնի կերպով որ և է եկեղեցու ծոց քշել, այդ եկեղեցին կը գադարի բառի բռն նշանաշ կութեամբ եկեղեցի լինելուց, քանի որ նրա անդամները զուտ հաւատացեալներ չեն լինին. Միմիայն այնտեղ է եկեղին ընդգրկում իսկական—զուտ հաւատացեալների, ուր հաւատալու կամ չհաւատալու, ուրիշ խօսքով՝ խղճի կատարեալ ազատութիւն է տիրում. և միմիայն այդպիսի տեղում է, որ եկեղեցին ներկայանում է իսկական—անկեղծ հաւատացեալների հասարակութիւն—ժողով. այն ինչ որ պէտք է լինի.

Հ. Յովակիմեան.



ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ե.

Հայ կրօնաւորութեան զեղծ կեանքը. Մեծն ներսէս իւ Ս. Յանձնականութիւնների տեսակները. Կրօնաւորական հաստատութիւնների տեսակները. Ս. Յանձնականութիւնների աղբիւրը: Ներսէսի բարեկարգութեան նետեանները «Ժագումն հայ վանականութեան» ըստ Յ. Թոփինեանի: Աստուածպատութեան ժամերը:

Հաւանօրէն Հայաստանի կրօնաւորները մինչև Մեծն ներսէս որոշ կարգ կանոն չունէին» նրանք կամասարի խոտաճարակների պէս անմարդաբնակ տեղերում ցաք ու ցրիւ էին ապրում կամ Եւստաթէոսի հետեւզների պէս կրօնաւորի սքեմով գիւղերում ու քաղաքներում հետզ հետէ մոռանալով և կրօնաւորութեան մաքուր կենցաղը զեղծ կեանք էին վարում: Կրօնաւորութիւնը որոշ կազմակերպութիւն ստացաւ Դ. գարի Բ. կէսին ներսէս մեծի հայրապետութեան օրով: